ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1219-Ա/2 «29» հունիսի, 2022 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպել «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«29» հունիսի, 2022 թ.
N 1219-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2022» **ՄՐՑՈՒՅԹԸ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կ**ոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (**https://grants.scs.am)՝ մինչև **2022 թվականի օգոստոսի 12-ը** ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ զանգահարելով 010-21-01-40 (*113, *120) կամ, տեխնիկական հարցերով, 010-210-140 (*108):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«29» հունիսի, 2022 թ.
N 1219-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2022» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2022 թվականի հունիսի 30-ի N 1219-Ա/2 հրամանի:

1.2 Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողների 2-4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված Թեմաների:

1.3 Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմանները,
- Խմբի ղեկավարի կողմից նախկինում իրականացված Թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (ասուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- *միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,*
- *բովանդակությամբ համընկնում է* Հայաստանի Հանրապետության *պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ* Թեմայի (*ծրագրի) հետ:*

1.4 Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

1.5 Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝____):*
- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА (Научный проект № ____).*
- *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Թեմայի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.6 Թեմայի իրականացման ընթացքում, 12 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7 Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է անցկացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին: Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս Խորհուրդը պետք է հաշվի առնի մշտադիտարկման արդյունքները:

1.8 Թեմայի իրականացման ժամկետն ավարտվելուց հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որն ընդունելու մասին Խորհուրդը տալիս է եզրակացություն:

1.9 Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբին ներկայացվող պահանջները

2.1 Խմբի ղեկավարը և կատարողները պետք է ծնված լինեն 1987 թվականի հունվարի 1-ից հետո, հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ:

2.2 Մրցույթի հրավերի «**2.1**» ենթակետում նշված տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ երկու տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար մեկ տարով:

2.3 Խմբի ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան:

2.4 Խմբում կարող է ընդգրկվել գիտական աշխատող, ասպիրանտ, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս, բակալավր, մագիստրատուրայի ուսանող, բակալավրիատի՝ առնվազն երրորդ կուրսի ուսանող:

2.5 Խումբը կարող է ունենալ գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու)՝ գիտական աստիճան ունեցող և օտարերկրյա գիտական կազմակերպությունում Թեմային առնչվող մասնագիտությամբ գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձ: Խորհրդատուն Խմբի անդամ չի հանդիսանում, նրա համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում և Մրցույթի հրավերով սահմանված տարիքային սահմանափակումը չի գործում:

2.6 Խորհրդատուի Հիրշի ինդեքսը (h-index) ըստ «Scopus» (*https://www.scopus.com/freelookup/form/author.uri*) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար պետք է լինի առնվազն 10, իսկ Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն 3:

2.7 Խորհրդատուն, մինչև **2022 թվականի օգոստոսի 12-ը** ներառյալ, իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից պետք է grants@scs.am էլեկտրոնային հասցեին ուղարկի ինքնակենսագրություն (Curriculum Vitae) և հաստատող նամակ (Letter of Confirmation)՝ նշելով Թեմայի իրականացման աշխատանքներին մասնակցության պատրաստակամության, Թեմայի կատարման ընթացքում իր գործառույթների շրջանակի և Թեմային առնչվող միջոցառումներ (գիտափորձեր, քննարկումներ, սեմինարներ և այլն) իրականացնելու նպատակով իր ներկայացրած գիտական կազմակերպությունում Խմբի անդամներին ընդունելու մասին:

2.8 Թեմայի իրականացման ամբողջ ժամանակահատվածում (24-ամսյա կտրվածքով) Խորհրդատուն պետք է առնվազն 15 օր գտնվի Հայաստանի Հանրապետությունում և առնվազն 15 օր իր ներկայացրած գիտական կազմակերպությունում ընդունի Խմբի անդամներին:

2.9 Խմբի ղեկավարը և կատարողները չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում, ինչպես նաև չեն կարող հանդիսանալ «Առաջատար հետազոտությունների աջակցության», «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության», «Գիտական խմբերի մեկնարկի», «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդման», «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» և «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթների շահառուներ:

3. Ակնկալվող արդյունքները

3.1 Թեմայի իրականացման ժամկետն ավարտվելուց հետո տվյալ Թեմայի շրջանակներում Խումբը պետք է ունենա Մրցույթի հրավերի «**1.5**» ենթակետով սահմանված նշումով.

- առնվազն երկու գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում *(«Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)», «Scimago Journal & Country Ranking (SJR)»* https://www.scimagojr.com/journalrank.php պորտալում)՝ առնվազն Q4 քառորդում կամ Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի *(Book Citation Index)* հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված առնվազն երկու գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում.

- կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրապարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի *(Book Citation Index)* հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

3.2 Մրցույթի հրավերի «**3.1**» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան՝ 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացված հայտի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի, եթե դիմելու պահին նշված պայմանն արդեն կատարվել է:

3.3 Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

3.4 Որպես Թեմայի արդյունք ներկայացված գիտական հրապարակումներում պետք է նշվի Թեմայի իրականացման վայր հանդիսացող գիտական կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) (affiliation):

4. Հայտի լրացման և ներկայացման կարգը

4.1 Հայտը լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի *(այսուհետ՝ Համակարգ)* միջոցով (grants.scs.am)՝ մինչև **2022 թվականի օգոստոսի 12-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

4.2 Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափը սահմանվում է 150.0 հազար ՀՀ դրամ: Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

4.3 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» և «Գործուղումներ» ենթահոդվածներով գումարային 12-ամսյա կտրվածքով կարելի է նախատեսել առավելագույնը 1500.0 հազար դրամ, որը կարող է ավելանալ աշխատանքի վարձատրության գումարը սահմանված չափից պակաս նախատեսելու դեպքում:

4.4 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների**,** հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռք բերման և/կամ ծառայությունների ծախսեր:

4.5 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Թեմայի իրականացման ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու և Խորհրդատուի ու Խմբի անդամների փոխադարձ այցելությունների գործուղման ծախսերը հոգալու համար:

4.6 Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի, քան՝ ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

4.7 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը (12-ամսյա կտրվածքով) չպետք է գերազանցեն 100.0 հազար դրամը:

4.8 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված բոլոր ծախսերը անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

4.9 *Համակարգի* միջոցով Հայտը ուղարկելուց հետո Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.2),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- Կազմակերպության (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը՝ Թեմայի արդիականության վերաբերյալ: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի գիտության տվյալ բնագավառի ՀՀ որևէ հանրային գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացություն,
- Խմբի անդամի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու մասին տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
- զինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը՝ տարիքային շեմը բարձրացնելու համար:

4.10 Մրցույթի հրավերի «**4.9**» ենթակետում նշված փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (քաղաք Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների փողոց 22): Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը **2022 թվականի օգոստոսի 19-ն** է:

5. Հայտերի գիտական փորձաքննությունը

5.1 Կոմիտեն ուսումնասիրում է Մրցույթին ներկայացված և Համակարգում ծածկագիր ստացած Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին և տեղեկատվությունը տրամադրում է Խորհրդի քննարկմանը:

5.2 Խորհուրդը քննարկում է Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացրած Հայտը գիտական փորձաքննության ենթարկելու հարցը:

5.3 Խորհրդի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

5.4 Խորհուրդը, Կոմիտեի հետ համատեղ, մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

5.5 Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի (Հավելված N 2.3) գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, Նախահաշվի հիմնավորվածությունը, Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական համապատասխանությունը Թեմային և որակավորումը, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառի/մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

5.6 Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

5.7 Փորձագետի՝ գիտական փորձաքննության առավելագույն գնահատականը 50 միավոր է:

5.8 Խորհրդի առավելագույն գնահատականը 20 միավոր է:

5.9 Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

5.10 Երկու փորձագետների գնահատականները 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

5.11 Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

5.12 Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն, Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով, ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

5.13 Խորհուրդը՝ վարկանիշային ցանկի հիման վրա, Հայտերի վերջնական ընտրության համար Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի ֆինանսավորման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

5.14 Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից՝ որոշում է Հայտերի շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

5.15 Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները՝ պահպանելով փորձագետի անանունությունը:

5.16 Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին է տրամադրում Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ու կատարողների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

6. Այլ դրույթներ

6.1 Կոմիտեի, Կազմակերպության և Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

6.2 Խմբի անդամների (ներառյալ՝ ղեկավարի) հետ, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, Կազմակերպությունում կնքվում են պայմանագրեր, որոնց պատճենները ներկայացվում են Կոմիտե:

6.3 Խմբի ղեկավարը, Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում կարող է կատարել ենթահոդվածներով նախատեսված ծախսերի վերաբաշխում, ներկայացնելով համապատասխան հիմնավորում և ստանալով Կոմիտեի գրավոր համաձայնությունը:

6.4 Խմբի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կազմակերպության ղեկավարի միջնորդությամբ, Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և Խմբի անդամների համաձայնությամբ, Կոմիտեի գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել Խմբի ղեկավարի փոփոխություն:

6.5 Խմբի անդամի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի անդամների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ (եթե 2 անձից բաղկացած Խումբ չէ), ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Խմբի

անդամների թիվը կրճատելու դեպքում Կոմիտեի հետ կնքվում է Պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

6.6 Կոմիտեն կարող է դադարեցնել Թեմայի ֆինանսավորումը, եթե.

- Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է վերաբաշխում առանց Կոմիտեի գրավոր համաձայնության,
- Խմբի կազմում կատարվել է փոփոխություն առանց Կոմիտեի գրավոր համաձայնության,
- ընթացիկ Հաշվետվությունը սահմանված ժամկետում չի ներկայացվել կամ Հաշվետվության վերաբերյալ Խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Բաժին 1	**Բաժին 2**
1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ***
1.6 Կենսաբանական գիտություններ	2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.3 Մեխանիկա	5.1 Հոգեբանություն
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.6 Նյութագիտություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.7 Բժշկական սարքաշինություն	5.4 Սոցիոլոգիա
2.8 Էկոլոգիա	5.5 Իրավունք
2.9 Կենսատեխնոլոգիա	5.6 Քաղաքական գիտություններ
2.10 Նանոտեխնոլոգիա	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
3.1. Ընդհանուր բժշկություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
3.2. Կլինիկական բժշկություն	6.1 Պատմություն, հնագիտություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
	6.5 Արվեստագիտություն

Հավելված N 2.2

«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____hg
(ազգանուն)
_____
(հաշվառման հասցե)
_____
(բջջային հեռախոսահամար)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2022 թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիա***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Թեմայի նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը***

5. ***Իրականացման մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

7. ***Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

8. ***Միջազգային համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները***

9. ***Տվյալ ուղղությամբ խմբի ձեռքբերումները***

10. ***Ակնկալվող արդյունքների (այդ թվում՝ գիտահանրամատչելի) քանակական և որակական ցուցանիշները*** (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

11. ***Օգտագործված գրականության ցանկը***